Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԿՆ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 4. Երևան - 4 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2025-30.06. 2025թթ. |
| Ներկայացման օր | 04.07.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են՝

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 75 շահառուի Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 12 դեպքի վարում՝ տարեկան վերափաստագրման 11 դեպք, թվով 1 շահառու ստացել է աջակցող և օժանդակ պարագա / լոգարանի աթոռ. արմնկային հենակներ/: Եռամսյակի ընթացքում միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնից ձեռք է բերվել թվով 13 շահառուների համար միավորների տեղեկանք՝ դեղերի ստացման, բժշկական կենտրոններում անվճար հետազոտություններ անցնելու համար և այլն: Սոցիալական աշխատողը թվով 7 շահառուի միջնորդել և ուղղորդել է միասնական սոցիալական ծառայություն՝ օժանդակ պարագաների ձեռք բերման նպատակով, կենսաթոշակի վերահաստատումը կազմակերպելու նպատակով, սոցիալական ապահովության համակարգում ընդգրկվելու նպատակով և այլն: Թվով 2 շահառուի ուղեկցվել է ՄՍԾՏԿ, քաղաքապետարան. «Արարատ» բանկ և այլն:
  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 4 շահառուի հոգեբանի կողմից պարբերաբար տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ. անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է 3 միջոցառում. որոնց մասնակցել է թվով 6 շահառու
  - ✓ Կենտրոն վարչական շրջանի տնային խնամքի աշխատողները նշեցին շահառու Սերգեյ Տերյանի ծննդյան 100-ամյակը:
  - ✓ Արցախի մեր հայրենակիցների, կենտրոն վարչական շրջանի թվով 4 շահառուներ այցելեցին «Ոսկեվազի» գինու գործարան. «Սաղմոսավանք», ինչպես նաև օրն ամփոփեցին «Նոր Ջրաղաց» ռեստորանային համալիրում:

- ✓ Կենտրոն վարչական շրջանի թվով 1 շահառու մասնակցել է «Նոնենի ցերեկային կենտրոնի կողմից կազմակերպված էքսկուսիային դեպի Դենդրոպարկ և Սպիտակի «Սուրբ Հարություն» եկեղեցին, ինչպես նաև Սուրբ Հարություն եկեղեցի:

Թվով 3 շահառու մասնակցել են հետևյալ համերգային ծրագրերին՝

- ✓ «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախում, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի պետական կամերային նվագախմբի, Հեռուստատեսության և ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախմբի, Ղազախստանի մշակութային օրերը Հայաստանում՝ Ղազախական պարի համույթի, Ա. Խաչատրյանի անվան 21-րդ միջազգային Դիրիժորների մրցույթներ համերգներին
- ✓ Կամերայի երաժշտության տուն Հայաստանի պետական կամերային նվագախմբի, Հայաստանի պետական կամերային երգչախմբի, «Տաղարան» հնագույն երաժշտության համույթի, Գրական երաժշտական երեկո կանանց մեկամսյակի հետ կապված, Ֆրանկոֆոնիայի օրերը Հայաստանում Հայկ Մելքյանի և Անուշ Նիկողոսյանի, երգեհոնային երաժշտության շաբաթօրյա համերգներին
- ✓ «Ա. Սպենդիարյանի» անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում «Պարի պետական համույթ»-ի համերգին
- ✓ Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոնում՝ ազգային նվագարանների անսամբլի համերգին
- ✓ Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում «Համլետ» և «Ա՜խ, Աննա, Աննա» ներկայացումներին:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 75 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 75 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 36 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 27 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով, այդ թվում շահառու նեղ մասնագետների մոտ, «Ավագյան» կենտրոն, «Վարդանանց» կենտրոն, «Էրեբունի» ԲԿ, «Աստղիկ» ԲԿ, շահառուներ կան, որ եռամսյակը մի քանի անգամ ուղեկցվել են տարբեր բժշկական հաստատություններ / Թիվ 1 համալսարանական հիվանդանոց, Ֆարանջյանի ուռուցքաբանական ինստիտուտ/, ատամնաբուժարան, տարբեր պոլիկլինիկաներ: 5 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային պայմաններում հետազոտությունների իրականացման կազմակերպում, 1 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 4 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական): Թվով 6 շահառուի համար կատարվել է վերքի մշակում, վիրակապում: Թվով 5 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության

կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ: Թվով 11 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ (շարունակական), թվով 2 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք, թվով 2 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է վերջիններիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուներին:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել է հետևյալ նյութերը.

1. Տարեդարձի նշում: (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/exytux)
2. Էքսկուրսիա «Ոսկեվազի» գինու գործարան. «Սաղմոսավանք», ինչպես նաև «Նոր Ջրաղաց» ռեստորանային համալիր:( տե՛ս հետևյալ հղմամբ ( տե՛ս հետևյալ հղմամբ https://surl.li/ofcmf)
3. Էքսկուրսիա դեպի Դենդրոպարկ, Սուրբ Հարություն եկեղեցի: (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lu/ibyfrn)

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Ծառայությունների տրամադրման գործում լուրջ խոչընդոտ է որևէ ծառայության հրատապ կարիք ունեցող անձին արտահերթ տվյալ ծառայություն ուղղեգրելու խնդիրը օր.
Կենտրոն վարչական շրջանում բնակվող (Տպագրիչներ 9, բն 10), 1942թ-ի ծնված Ռեյա Օրդյանի դեպքը: 2.5 կետում նկարագրված է դեպքը և կազմակերպության իրականացրած գործողությունները առանց ՄՍԾՏԿ-ի ուղեգրի:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ «Նունենի» ՀԿ թիմի պատասխանատուն ացանց մասնակցել է «Կաթոլիկ Օգնության ծառայություններ» /CRS/-ի կողմից կազմակերպված «Նախագծերի կառավարում» վերապատրաստման դասընթացին:
- ✓ Կենտրոն վարչական շրջանի տնային սպասարկման սոցիալական աշխատողները մասնակցել են ՄՍԾ խորհրդատվական նիստին:
- ✓ «Նունենի» ՀԿ թիմի պատասխանատուն և սոցիալական աշխատողը մասնակցել են ՄՍԾ Կենտրոն տարածքային կենտրոնի կողմից կազմակերպված համագործակցության ֆորումին:
- ✓ «Նունենի» ՀԿ թիմի պատասխանատուն Ծաղկաձորում մասնակցել է «Հավասարություն և մատչելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար» ՖՄԴ գործիքակազմի կիրառման վերաբերյալ վերապատրաստման դասընթացին:

- ✓ Կենտրոն վարչական շրջանից, ինչպես նաև Կենտրոն ՄՍԾՏԿ-ից ահազանգ է ստացվել, որ Տպագրիչներ 9. բն 10 հասցեում ահավոր վատ պայմաններում բնակվում է 1942թ-ի ծնված Ռելլա Օրչյանը, ով մշտական խնամքի կարիք ունի: Անհրաժեշտ է առաջնային կարիքի գնահատում իրականացնել և կազմակերպել նրա համար տնային խնամքի ծառայություններ:

  Ռելլա Օրչյան Հովհաննեսի- տունայց է իրականացվել թիմի պատասխանատուի և սոցիալական աշխատողի կողմից: Ռելլան բնակվել է աղջիկա՝ Յանինա Աղաբեկյանի, ծնված 1970թ, հետ, սակայն աղջիկը տեղափոխվել է հիվանդանոց և Ռելլան մնացել է անօգնական սանիտարական ահավոր պայմաններում: Կատարվել է շահառուի կարիքների գնահատում: «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի փոխնախագահի նախաձեռնությամբ հրատապ կազմակերպվել է ժողով-քննարկում Կենտրոն վարչական շրջանի. «Կենտրոն» ՄՍԾՏԿ-ի աշխատակիցների հետ և որոշում է կայացվել շահառուին ժամանակավոր տեղափոխել «Ավագ սերունդ» տարեցների վճարովի շուրջօրյա խնամքի կենտրոն, քանի որ շահառուն գտնվում էր ծայրահեղ վատ վիճակում: Միևնույն ժամանակ շահառուի խնամքի կենտրոն գտնվելու ընթացքում Կենտրոն վարչական շրջանը իր վրա է վերցրել շահառուի տան մաքրման աշխատանքների հարցը հնարավորինս արագ լուծելու խնդիրը: Սակայն տեսնելով, որ տան մաքրման գործընթացի կազմակերպումը ձգձգվում է, կրկին անգամ կապ ենք հաստատել Կենտրոն ՄՍԾ-ի և «Ավետարանչական» եկեղեցու հետ՝ գործընթացը արագ կազմակերպելու համար: Պայմանավորվածություն ենք ձեռք բերել մաքրման ծառայության հետ՝ տան մաքրությունը արագ կազմակերպելու նպատակով, իսկ «Ավետարանչական» եկեղեցին իր վրա է վերցրել վճարման գործընթացը: Այնուհետև կենտրոն վարչական շրջանի հետ երկար բանակցություններից հետո հասանք նրան, որ կազմակերպեն աղբի տեղափոխման գործընթացը: Աղջիկը՝ Յանինա Աղաբեկյանը, ծնված 1970թ, հիվանդանոցից տեղափոխվել է տուն, սակայն գտնվում է ծանր վիճակում, ամբողջովին անշարժ վիճակում է, անհրաժեշտ է շուրջօյա խնամք, սակայն երիտասարդ է, չունի հաշմանդամություն՝ շուրջօրյա խնամքի կենտրոն տեղափոխելու համար:

  Նրա համար ամեն օր կազմակերպվում է ճաշի տրամադրումը, ինչպես նաև մեկ անգամ վճարովի խնամող է այցելում անձնական հիգիենայի, ինչպես նաև նրան կերակրելու նպատակով: Ամեն դեպքում հարցը ամբողջովին լուծված չէ, քանի որ այն խնամքը, որ տրամադրում ենք, ժամանակավոր բնույթ է կրում, իսկ շահառուները՝ մայր և աղջիկ, կարիք ունեն մշտական խնամքի և վերականգնողական բուժման:

  Կապ ենք հաստատել «Կարմիր Խաչի» հիվանդանոցի հետ՝ աղջկա վերականգողական բուժումը կազմակերպելու համար, սակայն նա վճարունակ չէ, իսկ պետպատվերի շրջանակներում հնարավոր չէ իրականացնել, քանի որ չունի հաշմանդամություն:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 75/74 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 64 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 5 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 4 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 69 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –6<br>Բ - 68 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 75 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 75 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 75 |
| 5.1 | այդ թվում՝ թվով 8 մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 9 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 7 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն | 4 |

Կազմակերպության ղեկավար ___*Երվանդ Մխիթարյան*___ «04» 07.2025թ